ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.02-31

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՄԱՍԻՆ

ք. Երևան 31.01.2022թ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վ. Գասպարյան, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ի. Վարդանյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»ՊՈԱԿ-ի միջին տարեկան 45 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 2 533 300 (երկու միլիոն հինգ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ :

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	Ք. Արտաշատ, Աթաբեկյան 156
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011034114	Հ/Հ 900418000387
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրեն՝
_____ Վ. Գասպարյան (ստորագրություն)	_____ Ի. Վարդանյան (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ